

Սենեակն յանկարծ կարծես մի լոյս ողողեց,
 Եւ գեղադէմ աննիւթ հրեշտակ մի սիրուն,
 Օրորոցին փոքրիկ կեցած եզեր յեց՝
 Թեւովն հեղիկ դըպաւ մանկան աչերուն:
 Զիշտ նոյն պահուն շարժեցան մօրն ալ աչեր,
 Եւ ի կուրծքէն թըռաւ հառաչ մի մեղմիկ.
 Մինչգեռ մանկան ձայնիկն անոյշ մըրմընջէր,
 «Մայրիկ, զարթի՛ր, ես քիչ մի լաւ եմ այժմիկ»:

ԿԱՐԱՊԵՏ Ռ. ՈՍԿԵՆՆ

Ե Ղ Ն Ի Կ

—*—



ԻՏ է անտառը. քարձր և տերեւախիտ են նորա ծառերը և գե-
 ղածիծաղ նորա առապարները, երբ գարունը նորա մէջն է:

Իսկ երբ փչում է սառն քամին, երբ թափուում են գեղնած
 տերեւները, երբ ձիւնը խիտ առ խիտ դիգուում է ծառերի ճիւղերի
 վրայ, երբ ճիւղերը ծանրաբեռնուած խոնարհում են մինչև գետին, և
 ցնցելով իրենց կատարները ձնան փռւով լեցընում են օդը, տխուր է
 նա, սոսկալի է, մութ և խորհրդաւոր...

Եւ ոչ մի շնչաւոր Համարձակուում է անցնել այն տեղից, առանց աչք
 առնելու մուրիլ և մնալ ձիւնալից մացառների մէջ...

* *

Սնտառի մօտ մի քարայր կ'ար, քարայրի մէջ մի եղնիկ, և այդ եղնիկը
 ունէր մի սիրուն փոքրիկ ձագիկ:

Մի առաւօտ փոքր եղնիկը շատ զարմացաւ, երբ տեսաւ որ իրենց
 բնակարանի մօտ և ամբողջ անտառը, որոյ թուփերը իւր զուարճութեան
 վայրերն էին, ծածկուել էին մի սառն սալիտակ սաւանով:

Ձիւն էր, որ գիշերն 'ի բուն տեղալով ծածկել էր մանր թփերն իսկ,
 որոց չուրջ մայր եղնիկը սիրում էր մամուռներ փնտռել իւր ձագուկի
 համար:

Այլ ևս չկայր մամուռ. մայր եղնիկը յափշտակուած իւր նոր ձագու-
 կով, մոռացել էր պաշար ժողովելու:

— Գնանք անտառը, մոռածից նա, գուցէ գտնենք ուտելու մի բան:
 Շատ հոտոտաց ծառերի չուրջը պտըտելով, պեղեց ոտքերով, և վեր-
 ջապէս գտաւ քանի մը դալար խոտեր, որոնցից բաժին հանեց իւր ձա-
 գուկի մանրիկ ատամներուն:

Բայց փոքրիկ եղնիկը հանգիստ չէր մնում. ուզում էր խաղալ այդ նորա-
 տեսակ գետնի վրայ. վազվզում էր, կանգնած զարմանում էր, երբ իւր
 փոքրիկ ոտները խրուում էին ձնան մէջ. մտնում էր թփերի տակ, որոնց

դաշնելով զուարճանում էր, երբ նոցա վրայից ձինը թափուում՝ թաթախում էր իւր գունչը, ականջները և մարմինը...

Յատրում էր մացառներին, փոքրիկ տառականների վրայից. այս կողմից կրծում էր մի խոտի կամ շիւղի ծայր, միւս կողմից լիզում, թաթախում էր առականի մէջ. և այսպէս անդադար այս և այն կողմ ցատկոտելով՝ հեռանում էր ու հեռանում...

Մոռացել էր, որ մայրը իւր հետը չէր:

* *

Վարդի թփիկ մը գտաւ, նորա տրմատի մօտ բուսած խոտերը սկսեց կրծել, պահ մի գունչով սառ ձինը լզեց, պահ մ'ալ գլխի վրայից թռչե-տող թռչուններին նայեց...

Յանկարծ մի « Բնմ... » ձայն լսեց. սաստիկ վախեցած վեր թռաւ տեղից, մի քանի քայլ ցատկելով փախաւ. յետոյ կոնգ առաւ, ականջները սրեց և սպասեց:

Կարծում էր լսել իւր մօր ձայնը, որ կողկողապին « մէ է է » էր գոչում՝ լերկու ոստին զործեց, թռաւ թփիկի վրայից, և առանց ուշ դարձնելու խիստ քամուն՝ հանգիւզող փշայից մացառներուն և ձեան փոշուն, սկսեց գէպ 'ի ձայնը լսուած կողմը վազել:

* *

Ձայնը հետզհետէ մօտեցնում էր. ծառի մը շուրջը դարձաւ հեղուկ, վազեց բաց միջավայր մը, և հեռուէն ձեան վրայ բան մը նկատեց, որոյ վրայ ժողովիլ էին և որոյ շուրջը թռչաւում էին շատ մը սոսկալի սևափետուր ագռաւներ:

Շնչասպառ մօտ վազեց և ճանաչեց իւր մօրը, որ ընկած՝ կրծէն դուրս բղձող արիւնով ներկուած էր ձինը, որ հրբ տեսաւ ձագունկին, թոյլ ձայնով « մէ է է » մը գոչեց, և փակեց աչքերը...

* *

Փոքրիկ եղնիկը հոտոտեց մօրը. նախ չիմացաւ թէ ինչ էր եղել. մայեց, ոտներով ու գունչով շարժեց մօրը, լզեց...

Պաշ էր մայրը. նորա սառած աչքերն բաց, բայց անշարժ էին: Մայեց աղիոտորմ՝ ձայնով. չորս կողմը նայեց, վեր նայեց, կտրծեա զգում էր որ մի բան է եղել, և օգնութեան էր սպասում...

Ագռաւները չըջան էին կազմել մօր շուրջը և գանազան ոստումներով փորձում էին մօտ գալ...

Պաշեց կաթ ծծել. տեսաւ որ այլ ևս կաթ չկար մօր ծծերի մէջ... անօթի էր. փչում էր սառն քամին, մրսում էր:

Հետզհետէ մայիւնը սոստկացաւ. « մէ է է '... » գոչում էր լալազին և գոլգոջուն ձայնով. « մէ է է '... » արձագանգ էր տալիս անտառը. ագռաւները կաշիաչում էին, հողմը սուչում, ձեան հատիկները ճիւղերից նոցա վրայ թափուում. և այդ բոլորի միջից խեղճ որբ եղնիկի աղիոտորմ « մէ է է '... » թնդացնում էր անտառը:

Հետզհետէ խաւարը տիրեց ամէն կողմ, ագռաւները թռան գնացին, հողը սաստկացաւ և ձին սկսեց գալ...

Ներքինն երբեմն լսուում էր ձագունկի թոյլ ձայնը « մէ է է '... »

* *

Միւս օրը, ձերունի որսորդ Յակովբը հրացանը ուսին՝ անտառը մտաւ աղուէս որսալու. և երբ մթնալուն համար կամենում էր ետ դառնալ իւր որսացած քանի մը աղուէսներով, ծառի մը տակէն անցած ժամանակ՝ թոյլ ձայն մը լսեց, որ եղնիկի ձայնի էր նմանում:

Հետաքրքրեցաւ, ձայնին կողմը գնաց. հեռուէն սև իր մը նկատեց. Մօտեցաւ և նայեց:

Փոքրիկ եղնիկն էր. դունչը մօր գլխի վրայ՝ մեռել էր. իսկ քանի մի կաթիլ արցունք ցրտից սառած՝ կնցել էին նորա ականազրիւրների վրայ...

Աստուած չէր ուզել, որ մօր մեռնելուց յետոյ՝ խնդճուկ եղնիկը ապրէր: Խեղճ որբը մեռել էր շատ լալուց յետոյ:

Մի քանի ծանր ճիւղեր խորտակուած, իրենց վրայի ձիւնը սփռել էին նոցա վրայ որպէս հող, և իրենք ևս ընկել էին այդ կոյտի վրայ որպէս պսակ....

Վ. ՓԱՅՏԵՆՏ

Ա.ԳԱՄ

Ի ԳՈՂԳՈԹԱ ԼԵՐԻՆ

Այն ինչ յետին 'ի հառաչանս անդ Յիսուս
Ըզգերեզմանս երաց, շարժեաց ըզլերինս,
Գիսախոիւ անդէն Ադամ և քնալից
Ըզգլուխն 'ի վեր առ և յոտին կանգնեցաւ:

Յեղյեղեաց շուրջ զիւրեաւ ըզրիսըն բըժոտ,
Զարմանաւքանչ լըցեալ ահիւ պակուցմամբ.
Եւ սըրտատրոփ ձայն արձակեաց. Ո՛վ իցէն
Արինազանգդ այդ առ 'ի կախ ոգեսպառ:

Եւ 'ի գիտեն' 'ի խորշոմեալ ճակատուն,
Ալևորեալ հերացն ու այտից ուրուատիպ,
Ապաշխարող աջով կորանս ած և վնաս:

Ի կողակիցն անդրէն դարձեալ լալազին,
Եւ դոչեաց այնպէս՝ մինչև լեառներն թընդաց,
« Առ 'ի քո վասն 'ի մահ ըզՏէրն իմ ետու »:

ՄԻՆԾՈՒԻ